# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
# «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

*- Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
*- Օրը՝ 10.12.2018թ.*
*- Ժամը՝ 12:00*

## 1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի և դրանցում առկա անհամապատասխանությունների մասին

---

*(Ս.Փիրոյան)*

1. Ընդունել ի գիտություն որ,

1.1 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իրենց որակավորումը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ «Լեբերոն» ՍՊԸ-ի,

-«Լեբերոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով չի ներկայացվել իր որակավորումը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում համակարգում առկա տեխնիկական բնութագրի համար նախատեսված սյունակում չի լրացվել ապրանքի տեխնիկական բնութագիրը: Ընկերությունը փաստաթղթերը ներկայացրել է էլեկտրոնային կայքի միջոցով, սակայն համաձայն ՀՀ կառավարության 18.04.2017 թվականի թիվ 534-Ն որոշման 19-րդ կետի «4) գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

5) սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:» մասնակիցը պարտավոր էր փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով /գոնե համակարգի կողմից թույլատրելի ծավալով/: Հիմք ընդունելով վերոնշվածը՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Լեբերոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Հայտը համակարգում մերժելուց մասնակցին ուղարկվող հաղորդակցությունից անկախ /որակավորման շտկում/ հայտը ենթակա է մերժման:

Համապատասխան ժամկետի ավարտից հետո համակարգը «Լեբերոն» ՍՊԸ-ի կողմից 1-ին տեղ զբաղեցրած չափաբաժինների մասով ինքնաշխատ եղանակով ծանուցում կուղարկի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներին.

| Հ/Հ | Անվանումը | Մերժված մասնակցի | 2-րդ տեղ զբաղեցնող մասնակցի |
|---|---|---|---|
| | | Անվանումը | Անվանումը |
| 17 | Տոմատի մածուկ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | ՍՏԱՆԴԱՐՏ 2014 |
| 26 | Եգիպտացորենի պահածո | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ցիկլոիդ ՍՊԸ |
| 28 | Միս Տավարի ոսկորոտ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ֆոտոն |
| 30 | Հավի միս տեղական սառեցված | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Գալիմա |
| 33 | Նրբերշիկ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ֆոտոն |

| | | | |
|---|---|---|---|
| 34 | Ձուկ սառեցված | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ցիկլոիդ ՍՊԸ |
| 35 | Կաթ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | ԴԵԱԳԱ ՍՊԸ |
| 36 | Մածուն | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Գալիմա ՍՊԸ |
| 40 | Պանիր Լոռի | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Գալիմա |
| 41 | Խտացրած կաթ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ցիկլոիդ ՍՊԸ |
| 44 | Ձու | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Գալիմա |
| 71 | Թխվածքաբլիթ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ցիկլոիդ ՍՊԸ |
| 72 | Վաֆլի | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ցիկլոիդ ՍՊԸ |
| 73 | Շաքարավաղ | ԼԵԲՐՈՆ ՍՊԸ | Ցիկլոիդ ՍՊԸ |

Համակարգի կողմից համապատասխան ծանուցումը ստանալուց հետո նշված չափաբաժինների մասով ծանուցված մասնակիցների կողմից սահմանված ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հատերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- **«Ֆոտոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հավելված 2-ը և հավելված 3-ը, նմանատիպ պայմանագիրը ամբողջությամբ կցված չէ/գոնե համակարգի կողմից թույլատրելի ծավալով/: Միաժամանակ հավելված 3-ը լրացնելիս պետք է լրացնել նաև ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք: 29-րդ չափաբաժնի մասով ներկայացված չէ մատակարարի կողմից մատակարարվելիք մսամթերքի մասով << գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում գրանցված սպանդանոցի հետ ունեցած պայմանագիր պատճենը, ինչպես նաև ներկայացված չէ հրավերի պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոցի տվյալները:
- **«Ստանդարտ 2014» ՍՊԸ.** հաշվի առնելով, որ ընթացակարգի թիվ 4 արձանագրության մեջ եղել է տեխնիկական վրիպակ՝ 76-րդ չափաբաժնի փոխարեն գրվել է 78-րդ չափաբաժին, անհրաժեշտ է ներկայացնել նաև 76-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող փաստաթղթերը,
- **«Դեագա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 3-ը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև հավելվածի ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները նույնպես անհրաժեշտ է լրացնել, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք: Ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է, հաշվի առնելով, որ ընթացակարգի պայմանագիրը ավտոմատ եղանակով կազմվում է համակարգի կողմից և պայմանագրում հնարավոր չէ լրացնել այլ պայմաններ՝ նպատակահարմար է այդ պայմանները ներառել բնութագրում.
- **Ֆ/Ա Իշխան Միրզոյանի** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի հիմնական նկարագիրը և չի համապատասխանում հրավերի պահանջներին.
- **«Ցիկլոիդ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտի հավելված 3-ում լրացված չէ ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք.
- **«Նոր Ֆուդ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հավելված 2-ը և 3-ը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ.
-**«Գալիմա» ՍՊԸ**-ի կողմից համակարգում կցված ֆայլը չի բացվել, բացակայում են հավելված 2-ը և 3-ը: Միաժամանակ հավելված 3-ը լրացնելիս պետք է լրացնել նաև ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք: 31-րդ չափաբաժնի մասով ներկայացված չէ մատակարարի կողմից մատակարարվելիք մսամթերքի մասով << գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում գրանցված սպանդանոցի հետ ունեցած պայմանագիր պատճենը, ինչպես նաև ներկայացված չէ հրավերի պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոցի տվյալները:

1.3 Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ 1.2 կետում նշված անհամապատասխանություններն ուղղելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվել բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

## 2. Ընթացակարգի թիվ 4 արձանագրությունում առկա տեխնիկական վրիպակի ուղղման մասին

---

*(Ս.Փիրոյան)*

Հաշվի առնելով, որ ընթացակարգի թիվ 4 արձանագրությունում առկա է եղել տեխնիկական վրիպակ՝ հանձնաժողովը որոշեց թիվ 4 արձանագրությունում տալ տխնիկական վրիպակի ուղղում, մասնավորապես.

1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների ցուցակում 76-րդ չափաբաժնում նշված «Լեբերոն» ՍՊԸ-ի փոխարեն կարդալ «Ստանդարտ 2014» ՍՊԸ, 77-րդ չափաբաժնում նշված «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի փոխարեն կարդալ «Ֆոտոն» ՍՊԸ, 78-րդ չափաբաժնում նշված «Ստանդարտ 2014» ՍՊԸ-ի փոխարեն կարդալ «Ֆոտոն» ՍՊԸ,

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

*Մասնակցում էին՝*

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | *Ս.Փիրոյան* | |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | *Է.Գրիգորյան* | |
| | *Հ.Հարությունյան* | |
| | *Լ.Բաղդասարյան* | |
| | *Լ.Արտաշեսյան* | |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | *Ա. Համբարձումյան* | |